



Հակոբ Պարոնյան

Ազգային շոջեր

ԳՐԻԳՈՐ ԷՆՖԻԵՃԵԱՆ

Կ'աւանդուի թէ երկար տարիներէ յետէ վիճաբանութիւն մը բացուած էր աստուածաբաններու մէջ Աստուածաշունչին այն խօսքին վրայ, որ կ'ըսէ. «Ստրկացաւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի»: Իւրաքանչիւր դպրոցին աշակերտներն իրենց ուզածին պէս կը մեկնէին այդ պարբերութիւնն: Ոմանք սա բացատրութիւնը կու տային, թէ Աստուած չէր գիտեր, որ մարդն մոլութիւններու մէջ պիտի խեղդուէր: Ուրիշները կը պնդէին, թէ Աստուծոյ խղճին դպած էր մարդու գոյութիւն տալով՝ անոր խեղճութեան պատճառ ըլլալն: Վիճաբանութիւնն երբ այսպէս կը շարունակուէր, եւ ահա 1840-ին Գրիգոր Էնֆիեճեան կը ծնէր Տիգրանակերտի մէջ: Երախային ծննդեան չորրորդ օրն մկրտութեան հանդէսը կը կատարուէր եկեղեցոյ մէջ, ուր կը գտնուէին երկու վարդապետներ: Արարողութիւնն լմննալուն պէս, այս վարդապետներէն մին իւր ընկերոջը դարձաւ եւ հարցուց.

Կրցա՞ր գուշակել, թէ ինչո՞ւ գղջաց Աստուած՝ մարդն ստեղծած ըլլալուն համար:

Դժբախտաբար այո՛, պատասխանեց միւսն, իւր կանխատեսութեամբն Աստուած գիտէր անշուշտ, որ Էնֆիեճեան մը պիտի գար աշխարհ:

Այն թուականէն ի վեր, կ'ըսեն, լուծուած է այս խնդիրն եւ հիմա բոլոր աստուածաբաններն իրաւունք կու տան Աստուծոյ: Եթէ Աստուած գղջացած է մարդն ստեղծելու համար, որչափ աւելի գղջացած է արդեօք զայն իւր պատկերին համեմատ ստեղծած ըլլալուն համար: Իսկ մենք, մեր սովորութեան

համեմատ, աստուածաբաններու թողլով այս խնդիրներու լուծումն, կը դառնանք մեր նիւթին:

Հետաքրքիր ընթերցողն կը փափաքի հարկաւ գիտնալ, թէ ի՛նչպէս եկաւ աշխարհ Գրիգոր Էնֆիեճեան:

Փառք կու տանք Աստուծոյ, որ 1840-ին կառք չկար Տիգրանակերտ. եթէ ըլլար՝ աշխարհ գալուն պէս պիտի ըսէր այս երախսան.

Մէկ ոսկի տուէք կառքի վարձք, հիմա Բարձրագոյն Դոնէն եկայ:

Այսպիսի խօսք մը ըրած չէ, ոչ ալ կառքի վարձք առած է աշխարհ գալու համար, վասն զի պատրիարքարանի հաշուետոմարներու մէջ ասանկ գումար մը նշանակուած չէ:

Առանց Օլենտորֆ կարդալու՝ վեց ամիսէն խօսիլ սկսաւ. ստակ կ'ուզեմ, ինձի անուշ բերէք, կերակուր տուէք խօսքերն այնպէս կը գործածէր, ինչպէս մենք կը գործածենք բարի լոյս, Աստուծոյ բարին: Շատ անգամ կ'ըսէր. հաց կ'ուզեմ, հիմա կ'ուզեմ, եւ այս պահանջումը իր ծնողացը կը յիշեցունէր. կնիկ կ'ուզեմ, հիմա կ'ուզեմ:

Իւրաքանչիւր մարդ իր վրայ կ'ունենայ անդամ մը, որով սիրելի կ'ըլլայ ուրիշներուն: Մին իր ձեռներովն, միւսն իր ականջներովն, ուրիշ մը իր բերանովն, չորրորդ մը իր ուղեղովն համակրութիւն կը գրաւէ: Էնֆիեճեանը սիրելի ընող անդամն լեզուն էր, որուն շատերը սիրահարած էին:

1840-ին Տիգրանակերտի մէջ նոր սկսած էր բարեկենդանի ատեն դիմակ անցունելով տունէ տուն պտտիլը: Քանի մը երիտասարդներ կը փափաքին, որ դիմակ մ'անցունեն Էնֆիեճեանին, որ դեռ մէկ տարեկան էր, եւ մէկտեղ պտտին: Պզտիկ տղաներու համար դիմակ ուսկի՞ց գտնելու է, սովորութիւն եղած չէ մինչեւ հիմա, որ պզտիկ տղաներն դիմակ կրեն: Աղօթենք, որ գոնէ այս սովորութիւնն տղաներու մէջ մուտ չգտնէ, որպէսզի կարող ըլլանք անդիմակ դէմքեր տեսնելու: Երիտասարդներն վերջապէս կ'որոշեն, որ իրենք շինեն հատ մը եւ անմիջապէս պզտիկ դիմակ մը կը շինեն եւ այս տղուն երեսը կ'անցունեն:

Աղուո՛ր դիմակ, ազգասիրութիւն բուրող դիմակ մը: Կարաւանը ճամբայ կ'ելնէ եւ քանի մը փողոց դառնալէն ետքը պզտիկ դիմակաւորին դիմակը կ'իյնայ. դերձանը շատ բարակ ըլլալով բրդած էր: Նորէն կը կապեն, նորէն կը բրդի: Փողոցի մէջ կայնած երբ այս երիտասարդներն կը խորհէին իրենց ընելիքին վրայ, ատաղձագործ մը՝ որ նոյն գիշերը խանութին մէջ կ'աշխատէր, կարծելով թէ գողերն կը խորհրդակցին փողոցը՝ խանութէն դուրս կը նետուի եւ կը սկսի գանոնք դիտել: Երիտասարդներն ատաղձագործին կը մօտենան եւ իրենց ցան կը յայտնեն անոր, որ շուտ մը խանութը կը մտնէ եւ քանի մը վայրկենէն դուրս կ'ելնէ պնակ մ'ի ձեռին: Դիմակը կ'առնէ եւ ետեւը առատօրէն սոսինձ քսելէն ետքը՝ տղուն երեսը կը փակցունէ եւ խումբը կը ճամբէ: Բաւական կը գուարճանան նոյն գիշեր: Երբ իրենց տուները կը դառնան՝ ամէնքն ալ, ինչպէս օրէնք է, իրենց դիմակներն վար կ'առնեն, բայց մանուկն Էնֆիեճեան չկրնար իրենը հանել, վասն զի սոսինձով փակցուած էր եւ անհնար էր քաշել հանելն առանց երեսը պատռելու: Բարեկամները խորհելով, որ դիմակը հանելու համար երեսը պատռելը դարմանն չար քան գախտն պիտի ըլլար՝ թող տուին, որ դիմակը մնայ, յուսալով միանգամայն, որ տղուն դէմքը քանի մեծնայ դիմակն ինքնիրեն կ'իյնայ: Իսկ Էնֆիեճեան, որ մանկական հասակին մէջ վարժուած էր դիմակ կրելու, չհանեց եւ ստիպուեցաւ կրել այն ազգասիրութեան դիմակն մինչեւ մօտ ատեններս:

Յայտնի բան մ'էր, որ խելօք չնստող տղաները մեր մէջ ընդհանրապէս ուրիշին տուները կը դրկուին. հռովմէական ազգայիններու մէջ ալ սովորութիւն է, քիչ բացառութեամբ, վանք դրկել այն ամէն տղաները, որ տունը տակնուվրայ կ'ընեն, Էնֆիեճեանի ծնողքն իրենց գաւակին բարիք ընելու եւ ազգին չարիք հասցնելու համար վանքէն ուրիշ տեղ մը շէին կրնար դնել գայն:

1856-ին Լիբանան Զմմառի վանքը կը մտնէ, հոն եւրոպական լեզուներու աշխատած ժամանակը չնոռնար նաեւ ուսանելու տաճկերէն լեզուն, զոր ինչպէս կը վկայեն, ձեռք կը բերէ այնչափ, որչափ որ պէտք է դիմացինը շողոքորթելու համար: Շուրջ վեց տարի յիշեալ վանքին մէջ իրեն հարկաւոր եղած բաներն սորվելէն ետքը՝ Գրիգոր Ը. Կաթողիկոսէ վարդապետ կը ձեռնադրուի: Սեւ հագուստներու մէջ փաթրտուելէն մէկ երկու տարի ետքը՝ Եւրոկիա կ'ուղեւորի, որ շատ ընդունելութիւն չգտներ: Գերապայծառ Անտոն Հասունեան, որ Եւրոկիոյ

կողմերը կը գտնուէր նոյն թուականին, կ'աղաչուի հետն առնել տանիլ
Էնֆիեճեանն: Հասունեան կ'ընդունի իրեն եղած աղաչանքն եւ կը հրամայէ
Էնֆիեճեանին պատրաստութիւն տեսնել ճամբայ ելնելու համար: Ասկէ ծնունդ
կ'առնու ահա այն թշնամութիւնն, որ մինչեւ այսօր կ'ապրի այս երկու սեւ
գլուխներու մէջտեղը:

1866-ին Կ. Պոլիս կու գայ Մաքսատունէն ի՞նչպէս թող տուին, չգիտենք եւ կը
սկսի զինքն ծանօթացնել այն քարոզներով, զորս կու տար Բերայի սբ.
Աստուածածնայ եկեղեցոյն մէջ: Բարձր ձայն մը ունենալու համար ժողովուրդը
խոռոն բազմութեամբ կը դիմէր անոր քարոզն կամ, լաւ եւս, ձայնը լսելու համար,
ինչպէս մենք կ'երթանք երբ տեղ մը աղէկ երգիչ մը տեսնենք: Քարոզներուն մէջ
միշտ ազգային ոգով շարժելու կը ճգնէր ժողովուրդն, եւ գաղտնապէս
Հասունեանի դէմ կը մաքառէր ազգային իրաւունքներու պաշտպան կանգնելով:
Ժողովուրդն, որ շատ անգամ կը խաբուի, սիրեց այս ազգասէր քարոզիչն, որուն
բերանը Դիոգինէսի կարասին բերանին պէս երբեմն հարաւային կողմը, երբեմն
ալ հիւսիսակողմը կը դառնար:

Այս եղանակաւ ժողովուրդը շահեցաւ, եւ Հասունեան խաղին մէջ մեծ դեր
կատարեց:

Ի՞նչ դեր կատարեց, կը հարցունէ մին:

Ազնուական հօ՞ր դեր խաղաց, կը հարցունէ ուրիշ մը:

Հակառակորդի՞ դեր:

Սպասաւորի՞ դեր:

Միրահարի՞ դեր:

Ամէնն ալ կատարեց, բայց կ'աղաչեմ, մի՛ ընդմիջէք խօսքս:

1870-ին թեւերը սոթելով ազգային գործերուն մէջ մտաւ... կառքով:

Քաղաքականութիւնն արդէն նպաստաւոր էր Հակահասունեան դատին այն
թուականին քաղաքականութիւնը Հակահասունեանները քաթոլիկ կը ճանաչէր,

մինչդեռ հիմակուանը Հասունեանները քաթոլիկ կ'ընդունի եւ Էնֆիեճեան այս առիթէն օգուտ քաղելով՝ կը քաշալերուէր եւ յանդգնութեամբ Բ. Դոնէն կը պահանջէր ազգին իրաւունքներն, գորս... արդէն ունէր ազգը: Ճանչցուց զինքն բոլոր բարձրաստիճան պաշտօնատարներու, որոնցմէ ոմանք լաւ ընդունեցին զինքն եւ ոմանք ալ բնաւ չընդունեցին: Ամենաչնչին բաներու վրայ տեղեկութիւն առնելու համար Բ. Դոնը կը վազէր, եւ առանց քաշուելու Արտաքին գործերու պաշտօնէին նստած սենեակը կը մտնէր, հարցնելու համար, թէ ժամը քանի՞ին շոգենաւ կայ Իսկիտարի համար: Երբ Բ. Դոնէն հրաման եղաւ, որ եկեղեցիներն Հակահասունեանց յանձնուին՝ ինքը ժողովրդեան գլուխն անցնելով, գնաց տիրեց եկեղեցիներու, գորս տարի մը առաջ նորէն ձեռք անցուց Հասունեան:

Այսպէս ազգային գործերուն ղեկավարութիւնն ստանձնեց եւ իր ղեկավարութեամբը Սամաթիայէն Քումքաբու նաւակով երթալու կը վախճամ եւ իրեն պաշտպան գտաւ մէկ երկու ամիրաներ, գորոնք այնպէս կը գործածէր՝ ինչպէս կը գործածէ Խասագիղ բանող շոգենաւի մը նաւապետ՝ շոգենաւին սուլիչը. շուանը քաշելուն պէս սուլիչը կը սուլէ: Այս ամիրաները շխորհեցան, կամ, աւելի ճիշտը, պակաս խորհեցան Քիւբելեանը պատրիարք ընտրելով: Ինչո՞ւ ընտրեցին Քիւբելեանը: Վասն զի թշնամի էր Հասունեանին մասնաւոր գործի մը համար, ինչպէս է Էնֆիեճեանը: Այս թշնամութեան պատճառն վերնալուն պէս բնական էր, որ թշնամութիւնը տեղի տար հաշտութեան, ինչպէս որ եղաւ: Այսպիսի պարագայի մէջ Հասունեանին ոչ թէ անձին, այլ սկզբունքին հակառակ եւ միանգամայն ողջամիտ ու անշահասէր մէկը գտնել պէտք էր: Եթէ կար ասանկ մէկն ու չընտրեցին՝ շատ ողբալու պարտաւոր են, իսկ եթէ չկար՝ բնաւ չողբան Քիւբելեանն ընտրելուն վրայ, վասն զի ուշ կամ շուտ պիտի կորսնցունէին իրենց դատը: Սակայն այս ընտրութեան մէջ ալ մեծ դեր խաղացած է Էնֆիեճեանն, որ ամիրաներու ընտրելի ներկայացուց Քիւբելեանն, որ պատրիարք եղաւ եւ վերջը կամովին հրաժարելովը վերջին հարուածը տուաւ Հակահասունեաններուն:

Որչափ որ պատրիարքը Քիւբելեան էր՝ գործողն Էնֆիեճեան էր, ազգին գործերը... խառնակելու համար: Պատրիարքարանի սնտուկին մէջ դրամ չկար, վարչութիւնը կ'աշխատէր ազգին ներքին վիճակը բարոյքելու եւ Էնֆիեճեան կառքէն վար չէր իջնար:

«Բարի լոյս, ոսկի մը տուէք կառքի վարձք: Աստուծոյ բարին, վաղը Բ. Դուրը պիտի երթամ, երկու ոսկի տուէք»: Ասոնք էին ահա իւր տէրունական աղօթքը: Ազգը լաւ կ'ընէր, եթէ Բ. Դոնան մէջ սենեակ մը ուզէր Էնֆիեճեանին համար եւ ազատուէր երթելու ծախսէն: Սնտուկն անկարող իւր եկեղեցականներն հոգալու՝ կը սնուցանէր Էնֆիեճեանի վարձած կառքին ձիերը, որք ազգին բաւական եկամուտը փճացուցին եւ աղէկ կերան ու խմեցին դատին շնորհիւ: Հոս դնել արժան կը դատենք այն տեղեկութիւններն, զորս խնդրած եւ ստացած ենք մեր բարեկամներու մէկէն, որ ճշմարտախօսութեան համբաւ կը վայելէ:

«Գիտնալու է, կը գրէ մեզ մեր բարեկամը, որ այս մարդուն համար չկայ կաթողիկոս, պատրիարք, սինհոդ, աթոռակալ, վարչութիւն եւ երեսփոխանութիւն: Ընկերութեանց հակառակ է: Երբ վարչութիւնն բարեկարգութեանց կը ճգնէր, Էնֆիեճեան իւր շայլ ծախսերով կը ծանրանար վրան: Երբ կղերը ազգօգուտ կանոնադրութիւններ կը սահմանէր, ասի մէկ երկու ամիրայից կոթնած կը տապալէր արմատէն ինչ որ շատ աշխատութիւններով շինուած էր: Վերջապէս քիչ օգուտ եւ մեծ վնաս տուած է Հակահաստունեանց իւր անխտեմ բնութեամբն եւ վարուքը. եւ այսօր Բերա Ոսկեբերան եկեղեցոյ մեծ ժողովրդարանն իրեն սեփականած՝ փառաւորապէս հանգիստը կը վայելէ: Այս անձին անունն մեծ հռչակուեցաւ, բայց չունի գովեստի գործ մը ամենեւին...: Իւր ազնիւ եղբարցը չնմանիր... իւր Միաբանութիւնը չսիրեր զինքը իւր կրքոտ բնատրութեանը համար: Խոհեմութիւն բառն իրեն համար նշանակութիւն չունի, ամէն գործերը գահավիժական են: Խնդումն ու լացը մէկ վայրկեանի մէջ կը տեսնուի աչքերուն վրայ... վերջապէս իւր... գործողութիւններովն ազգին եւ ընդհանուր կղերին շատ վնասած է:

Այս ընթացքովն Հակահաստունեաններուն վնասելէն ետքը փափաքեցաւ ուրիշ գործի մը ձեռնարկել, վասն զի Էնֆիեճեան, գործունեայ մարդ, վայրկեան մը չկրնար առանց գործի ապրիլ, միշտ զբաղած ըլլալու է: Անտոնեան միաբանութիւնն իւր ճաշակին հակառակ էր, ուստի պէտք էր ջնջել զայն, բայց ջնջելու համար ծրագիր մը պէտք էր: Էնֆիեճեան շինեց այդ ծրագիրն, որով կը յայտնէր, թէ բոլոր անմիաբանութիւններն Չմմարու մէջ միանալու էին: Վէճ մը ծագեցաւ երկու միաբանութիւնների մէջ: Հակահաստունեաններն իրենց մէջ երկուքի բաժնուեցան, կղերն իրարու դէմ ելաւ եւ Հաստունեան սկսաւ զուարճանալ: Այս խնդրոյն մէջ է, որ Էնֆիեճեանի դիմակն վար առնուեցաւ եւ երեսը քիչ մը

պատռեցաւ, բայց ինքը չկարմրեցաւ, կարմիրի վրայ գաղափար չունի.
մանաւանդ թէ քաջ մարդ է. իւր գրածը, կ'ըսէ Ծերենց, կ'ուրանայ առանց
քաշուելու:

Միշտ կը խոստանայ, եւ եթէ այսօր երթաս եւ իրմէ տեղեկութիւն խնդրես՝ կը
պատասխանէ.

...Էֆենտին խօսք տուաւ քանի մը օրէն Հասունի ձեռքէն առնել
պատրիարքական հրամանագիրն եւ մեզի տալ:

Թեթեամիտները կ'ըսեն.

Ի՛նչ գործունեայ մարդ:

Ողջամիտները կը մըմռան.

Ի՛նչ գործունեայ սուտ:

1877-ին Միտհատ փաշայ Օսմանեան երեսփոխանական ժողով հրաւիրեց բոլոր
հպատակ ազգերու գլուխներն, որ կարծիք յայտնեն պատերազմի՞նք թէ ոչ ի
վրայ, Էնֆիեճեան խօսք առնելով ատենաբանութիւն մը ըրաւ, որով հասկցուց թէ
ոչ միայն պէտք էր պատերազմիլ, այլ նաեւ հարկ էր անպատճառ կուրծքէն
գարնուիլ, կոնակէն գարնուիլն շընդունիր: Շատ քաջալերական էր այս խօսքն,
թէպէտեւ աւելի աղէկ կ'ըլլար եթէ ըսէր, պէտք է կուրծքէն գարնենք, եւ ոչ թէ
գարնուինք: Այս վերջինը քիչ մը մութ էր. շատերն այնպէս հասկցած էին, թէ
Էնֆիեճեան գիտէր թէ մեր զօրքերն անպատճառ պիտի գարնուէին եւ անոր
համար ո՛ր կողմէն գարնուելու համար հրահանգ կու տար, թէպէտեւ պէտք չէ
ուրանալ, որ Էնֆիեճեան վերջէն չբարկացաւ այն զինուորներուն դէմ, որոնք
թեւէն կամ սրունքէն վիրատրուած էին, եւ այս կերպով մատնեց զինքն ցոյց
տալով, որ կուրծքէն գարնուիլը պերճախօսութեան համար գործածած էր:
Իրատունք ալ չունէր, կարծենք, մեռնելու գնացող մարդերու պայման դնել եւ
ստիպել զիրենք, որ իրենց կուրծքէն գարնուին: Այս ատենաբանութիւնն շատ
ծափահարութիւն վաստկեցաւ եւ Էնֆիեճեան վարձքն առաւ սիրելի ընելով զինքն
իրեն... անժանօքներուն:

Լեզուն՝ որուն պարտի իր բոլոր համբան, քիչ մնաց, որ Վատիկանու ժողովոյ մէջ փորձանք բերէր գլխուն: Կը գրուցուի, թէ վերջին անգամ Հռովմէն ծայտեալ փախաւ Կ. Պոլիս. եթէ ձերբակալուէր՝ չգիտցուիր, թէ ո՛ր վանքին մէջ պիտի առնէր շունչը:

Իբրեւ խմբագիր եւս ոչ նուազ յաջողակութիւն ունի ուրիշներն յանիրաւի ձաղկելու մասին:

Շատ յօդուածներ գրած է Մեճնուայի մէջ, եւ շատ տետրակներ հրատարակած է առանց ստորագրութեան: Ինքն է, որ լրագիրներու մէջ յարձակեցաւ Ապտուլլահ մեծ. Միքայէլ Էֆենտիին վրայ, գոր վիրաւորեց, կ'ըսեն, առանց իրաւունք ունենալու:

Իբրեւ բանահիւս չենք կարծեր, որ մեծ արժէք ունենայ: Ոչ միայն չենք կարծեր, այլ կրնանք պնդել, որ տաղաշափութիւն ընելու անկարող է, վասն զի իրեն համար չափ, կշիռ, ոտք նշանակութիւն չունին: Նոյնայանգ ոտանաւոր մ'ալ չկրնար գրել, վասն զի իր գործերէն հաստատուած է որ գործի մը վախճանը բնաւ չխորհիր: Արձակի մէջ միայն կը յաջողի:

Էնֆիեճեան, ինչպէս ըսինք, գործող մարդ մ'է. եւ եթէ աշխարհական մնար՝ աւելի օգտակար կրնար ըլլալ քսանըհինգ երեսուն աղուորիկ գաւակներ ընծայելով ազգին, վաճառականութիւնը ծաղկեցնելով, ուրիշներէն փոխառութիւն ընելու դիրին ճամբան սորվեցունելով: Չենք կարող ըսել՝ թէ այս անձն բնաւ ազգասիրութիւն չունի, բայց միայն կը խորհինք, թէ կատուն մուկ բռնելու պատրաստուած ժամանակը իր տիրո՞ջն բարութիւն ընելու կը խորհի, թէ իր փորը կշտացնելու:

Եթէ քիչ մը իր տարիքն առնելով՝ Էնֆիեճեան իր եռանդն եւ կիրքը քիչ մը գապէ ու խելքով գործել սկսի, կարող է ազգին նուազ չարիք հասցունել եւ երախտապարտ կացուցանել զայն: Կդերէն, քիչ բացառութեամբ, ազգն արդէն բարիք չսպասեր, եւ եթէ երբեմն կրօնական մը կը յարգէ՝ պատճառն այն է, որ նուազ չարութիւն տեսած է անկէ:

Թերեւս հարցնողներ գտնուին՝ թէ այս մարդն եթէ այսչափ գործունեայ է՝ հիմա ինչո՞ւ չգործեր: Կը պատասխանենք իրենց, որ այս մարդը հիմա ալ կը գործէ, միայն թէ առաջ լեզուովը կը գործէր, իսկ հիմա ստամոքսովն: Երբ սա վերջինն ալ գործելէ դադրի՝ այն ատեն Էնֆիեճեան գոջումի պիտի գայ, ծունկ պիտի չոքի Հասունեանին առջեւ եւ Մեղայ յերկինս եւ առաջի քո ըսելով՝ աջը պիտի համբուրէ Հասունեանին, որ ուրախութենէ այլայլած պիտի պոռայ.

Կորսուած էր անատակ որդիս եւ գտնուեցաւ:

Հասակով երկար, կազմով բարեճեւ, դէմքով գեղեցիկ մարդ մ'է Էնֆիեճեան: Երբ տեղ մը նստած տեսնեն զինքն, այնպիսի դէմք մը կ'ունենայ, որ կարծես թէ երկու օրէ ի վեր բերանը բան մը դրած չըլլալով՝ տեղէ մը ճաշի կը հրաւիրուի, սեղանը կը նստի եւ կերակուրի կը սպասէ: Իսկ անցուդարձը քիչ փողոցէ մը անցած ատենդ եթէ քովդ գտնուի տասներեօթը տարեկան աղջիկդ եւ Էնֆիեճեան յանկարծ դէմդ ելնէ՝ իւր ահարկու դէմքը հետեւեալը կ'ազդէ քեզ.

Անդիի կողմը անցնինք, աղջիկս, սա մարդուն աչքերը չեն հաւնիր ես: